

11134  
*Հոգ Եւրոպայ արժանի խաղաղութեան թիւեր*

Ս.Ն.ՔՐՈՍՏՆԻՐ ՍՈՒՆՆԵՆ - *խ*

# ԳԻՒՂԻ ՎԱՐԺԱՊԵՏ

ՊԻԷՍ 2 ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՈՎ



**ԹԻՖԼԻՍ**

«ԳՐԱՆՈՒՄ» ԸՆԿ. | Կուլտ. Կ-ն «Կուլտուրա»  
Վելյաչնիևսկայա՝ լա., 39 18.

1909

119 NOV 2010  
2009

ԱԼԷԿՍԱՆԴՐ ՍԱԲԵՐԱՆ

891.99

17-ԱԶ-13

Այր.



# ԳԻՒՂԻ ՎԱՐԺԱՊԵՏ

ԳԻՒՍ 2 ԳՈՐԺՈՂՈՒԹԻՒՆՈՎ

Настоящая пьеса, подь заглав. „Сельскій учитель“, сочин. А. Абеляна, разрѣш. Намѣстникомъ Его Императорскаго Величества на Кавказѣ для представлениа на сценахъ края. 12-го августа 1909 г. Гор. Тифлисъ.

1777  
1199558  
2. Myshnikh

1001  
1001  
36



ԹԻՖԼԻՍ

Տպարան «Կուլտուրա» ՀԿԿ. | Типогр. Т-ва «Культура»  
Вельяминовская ул., № 18.

1909

20.05 2013

16650  
1518

**Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ջ Ի Ն Ք**

- ԳէՈՐԳ Գիւղի վարժապետ:
- ԱՌԱՔԵԼ տանուտէր:
- ՈՍԿԻ սրահ կինը:
- ՄԱՆԻՇ սրահաց թուր:
- ՆԱՆԱՇ այրի գեղջկուհի:
- ՕՎԱՆԷՍ գզիր:
- ՄԱՐԳԱՐ խանութպան:
- ՄԻՆԱՍ սափրիչ:
- ԳԱԼՈՒՍՏ տիրացու:
- ԽԱԶՍՏՈՒՐ բանաստեղծ:

Գիւղացիներ, գեղջկուհիներ, աշակերտներ, ամբոխ:

Յարգելի խաղացողներին խնդրում եմ ոչ մի գռեհիկ բարբառ թոյլ չտալ մտցնել մէջը և ոչ էլ այլազգի բառեր:

**Ը Ռ Ը Ջ Ի Ն Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ն**

Տեսարանը ներկայացնում է մի մեծ սենեակ. մի-մի դուռ աջ, ձախ եւ մէջտեղ: Չախ անկիւնում, միջի պատի պատուհանի առաջ մահճակալ. սրահ առաջ սեղան, շուրջը 3—4 աթոռներ: Անկիւնում մի հատ կրկնակօշիկ: Սեղանի վրայ թամարահան եւ այլն:

**Տ Ե Ս Ի Լ 1.**

**Մ Ա Ն Ի Շ Ե Ի Ո Ս Կ Ի**

ՄԱՆԻՇ (ձախ դռան արանքով նայում է ծածուկ):  
ՈՍԿԻ (աջ դռնով դիտում է և յետոյ բեմ գալիս):—  
Շատ ես տաքացած վարժապետի վրա. մենք էլ ենք աղջիկ եղել. ամօթ է, Մանիշ. բաները շատ էլ չեն սպիտակացնել:

ՄԱՆԻՇ.—Ա՛խ, ի՜նչ մեղք եմ անում, տատիկ. դռան ետեից ականջ եմ դնում էլի:

ՈՍԿԻ.—Ո՛չ. պապդ իմանայ, ողջ-ողջ կաշիներս կըմաշկի:

ՄԱՆԻՇ.—Ա՛խ, տատիկ. մէկ ականջ դիր, ասե ի՜նչ սիրով է խօսում նա աշակերտների հետ: Նրանք նրանից ոչ վախենում են, ոչ քաշվում: Նա մի սիրող եղբայր է, մի ծնող:

ՈՍԿԻ.—Բաւական է, սիրելիս: Յեա դարձիք գորգ գործիր:

ՄԱՆԻՇ.—Ախ, տատիկ, դու հօ ուրիշ չես...  
ապա ի՞նչ ասեմ ցաւս:

ՈՍԿԻ.—Տատիկդ քեզ մատաղ լինի:

ՄԱՆԻՇ.—Նա ասում է՝ գիւղի վարժապետը  
ամեն բանից պէտք է տեղեկութիւն ունենայ: Դու  
տեսն՞ի ես, տատիկ, դասատան մէջ ունի գեղերով  
լիքը մէկ պահարան: Այս առաւօտ, իմ աչքով  
տեսայ, մի երեխայի ոտքը ապակի էր մտել. նա  
իր ձեռքով հանեց, մաքրեց տեղը և վրան դեղ  
դրաւ ու մաքուր շորով կապեց:

ՈՍԿԻ.—Եւ սրա համար էլ պապդ մտքումը  
բան է դրել:

ՄԱՆԻՇ (ուրախ, բռնեց նրա թևից).—Ի՞նչ է դը-  
րել, մեծ մայրիկ:

ՈՍԿԻ.—Ոչ, ոչ. Աստուած մի արասցէ, իմա-  
նայ, որ քեզ մօտ բան եմ խօսել...

ՄԱՆԻՇ.—Ախ, դու չես կարող թագցնել. ես  
ձանաչում եմ իմ մեծ մայրիկի բաբի սիրտը:

ՈՍԿԻ.—Գլխաւորը՝ դու այդ տղի մօտ թե-  
թեամիտ բաներ թոյլ չտաս քեզ, Մանիշ: Խորա-  
մանկութիւն արա, ձեռքիւր միամիտ, սուտ-սուտ  
ծաղրիւր իրան, տես ինչ է միտքը:

ՄԱՆԻՇ.—Ախ դու, խորամանկ տատիկ. ե-  
րևի ուրեմն դու էլ աղջիկ ժամանակդ այդպիսի  
բաներ ես արել:

ՈՍԿԻ.—Ոչ, ոչ, մեղայ Աստծոյ. ուշադրու-  
թիւն մի դարձնիլ իմ դատարկախօսութիւնների



վրա... ես պառաւել եմ և խօսածս էլ չեմ իմա-  
նում:

ՄԱՆԻՇ.—Ախ, մէկ ականջ դիր, տատիկ:  
(Բացեց ձախ դուռը):

ԳէՈՐԳ (բեմի ետևում).—Եւ այդպէս, սիրելի  
մանուկներ և եղբայրներ...

ՄԱՆԻՇ.—Նա մեծերին եղբայր է ասում:

ԳէՈՐԳ (շարունակում է).—Սիրենք մեր լեզուն,  
պաշտենք մեր մայրենի քաղցր լեզուն. թոյլ չը-  
տանք ընկնի ոտքի տակ այդ գեղեցիկ ղիցուհին.  
պահպանենք նրան, որովհետեւ նա է ազգութեան  
յենարանը և ոսկի սիւնը:

ՄԱՆԻՇ (դուռը ծածկեց).—Վերջացրեց: Փախ-  
չենք, տատիկ, թէ չէ գէմքիցս իսկոյն բան կը-  
հասկանայ: (Գնացին աջ դռնով: Լսվեց զանգակի հնչիւն  
և աշակերտների ցրվելը):

## Տ Ե Ս Ի Լ 2.

### ԳԷՈՐԳ և ՄԱՆԻՇ

ԳԷՈՐԳ (եկաւ ձախ դռնով).—Փնւ, այնտեղ փո-  
շի, իսկ այստեղ դարձեալ նոյն ծխահոտը: (Կան-  
չեց): Տատիկ, տատիկ:

ՄԱՆԻՇ (իսկոյն մտաւ աջից մի ձեռք բռնած).—  
Սա՛ս, մի քիչ հանդարտ:

ԳԷՈՐԳ (ցած).—Ի՞նչ է պատահել:

ՄԱՆԻՇ.—Տատիկս քնած է:

ԳԷՈՐԳ.—Եւ նա կարողանում է այս կովաղ-  
բի հոտում քնել: Սա կարող է գլուխ բռնել:

ՄԱՆԻՇ.—Հոտը ինչներբոց է պէտք: Դուք հեռվից նայեցէք թէ ինչ գեղեցիկ ծուխ է բարձրանում մեր երգիկից... ինչպէս թեթև, ուղիղ, բամբակի նման ճերմակ:

ԳէՈՐԳ.—Ձէ, ճշմարիտ, օրիորդ, դուք կատարեալ բանաստեղծուհի էք, պօէտեսս...

ՄԱՆԻՇ.—Հը՛մ... իհարկէ, դուք ինձ կըծաղբէք. ես քաղաքում չեմ եղել:

ԳէՈՐԳ.—Բայց ես ի՞նչ իրաւունք ունիմ ձեզ ծաղրելու:

ՄԱՆԻՇ.—Իհարկէ, ինձ օրիորդ էք կոչում:

ԳէՈՐԳ.—Բայց քանի որ մենք օտարներ ենք...

ՄԱՆԻՇ.—Հը՛մ, ապրում ենք մի օճորքի տակ և տակաւին օտարներ...

ԳէՈՐԳ.—Ի հարկէ, ես ոչինչ չեմ ասում...: Ինչո՞ւ էք ձեռքներդ բռնել:

ՄԱՆԻՇ (սուս-սուս).—Մտտս փուշ է մտել:

ԳէՈՐԳ.—Նայեմ... (Բռնեց, նայեց): Ոչինչ: Ինչո՞ւ էք ժպտում:

ՄԱՆԻՇ.—Դուք այնպէս էք «ոչինչ» ասում, կարծէք ցաւողը ձեր մատն է:

ԳէՈՐԳ (նայեց անկողնին).—Ա՛յդ ինչ է: Դարձեալ վերմակիս վրա հաւեր են ման եկել, դարձեալ կեղտոտել. այդ ի՞նչ գեղին բան է:

ՄԱՆԻՇ.—Խնդրեմ չկպչել մեր հաւերի պատւին: Իսկ կօկորգներդ ցաւելիս, երբ ձուի գեղնոց էք պահանջում, այդպէս չէք բարկանում... հը՛մ:

ԳէՈՐԳ.—Ուրեմն ի՞նչ կըհրամայէք, հաւերի պաշտպան օրիորդ. վերկենանք ներքողականներ յօրինենք նրանց համար:

ՄԱՆԻՇ.—Իհարկէ: Աւելի լաւ է, առնէք պահէք, որովհետեւ սա ճար է. ի՞նչ կանէք, եթէ ձեր քթի վրա մի բշտիկ բանի:

ԳէՈՐԳ.—Շնորհակալ եմ, այդ էր պակաս:

ՄԱՆԻՇ.—Իհարկէ: Մեծ հայրիկն ասում է սա փորձված ճար է. նոյնպէս սև կատուի արիւնը, շան բուրդը, սև հաւը, բորենիի թաթը:

ԳէՈՐԳ.—Բորենիի թաթն էլ:

ՄԱՆԻՇ.—Ասում են՝ եթէ կամենաս, որ մէկը քեզ սիրի, պէտք է ծոցումդ ունենաս...

ԳէՈՐԳ.—Եւ դուք հաւատում էք այդ սնտտիապաշտութիւններին: Դէ, էլ ինչո՞ւ եմ գլուխս այստեղ կոտրում:

ՄԱՆԻՇ.—Դուք մեր խոզերին էլ չէք հաւանում, բայց տեսէք ինչպէս մաքուր են պահում մեր բակն ու փողոցները:

ԳէՈՐԳ.—Այո, պէտք է ասել, որ և՛ երևելի սանիտարներ են, և՛ երևելի բասսօ ձայնով իրանց ազգային երգը երգող, խո՛րտ-խո՛րտ-խո՛րտ:

ՄԱՆԻՇ.—Դուք մեզ էլ չէք հաւանում...

ԳէՈՐԳ.—Բայց դուք մի՛ նեղանաք, օրիորդ: Ես ինքս անհա, ձեզ յայտնի է, հարուստ ծնողների զաւակ եմ, բարձրագոյն ուսումս թողել եմ կիսատ և իբրև մաքուր իզէալիստ՝ եկել եմ այս գիւղը իմ փողովրդին ծառայելու:

ՄԱՆԻՇ.—Ինձ ի՞նչ, որ ձեր ծնողները հարուստ են. իմ պապ տանուտէր Առաքելն էլ է գիւղի առաջին հարուստը: Մեր ամենքի հարստութիւնը Արարչի հարստութիւնն է: Մարդը մարդուն սիրելի է լինում ցաւոյ սիրտ ունենալուն համար, քաղցր լեզուի համար:

ԳէՈՐԳ.—Այդ ինձ համար շատ հաճելի է, որ դուք այդ հասկանում էք: Այստեղ շատ քչերն են ինձ գնահատում:

ՄԱՆԻՇ.—Ամենքը միատեսակ չեն կարող գնահատել... Գուցէ կայ... մէկը...

ԳէՈՐԳ.—Ո՞ւր է այդ մէկը... հաւատացնում եմ, ով էլ որ լինի նա, ես նրան կըսեղմեմ կըրծքիս... թէ չէ տեղական կեանքի պայմանների հետ ես դժվարութեամբ եմ յարմարվում:

ՄԱՆԻՇ.—Հը՛մ. տիրացու Գալուստը մեր տէրտէրից էլ շատ բան զիտէ. բայց իսկի չի գանգատվում:

ԳէՈՐԳ.—Ինչպէ՞ս... դուք ինձ նրա հետ էք համեմատում...

ՄԱՆԻՇ.—Ի՞նչ կայ որ: (Խորամանկօրէն): Նա զեռ ոչ մի տեղ չի ասել, որ արևը մեծ է, քան թէ աշխարհը. այն արևը, որ մեր թոնրի բերանից տանն անգամ փոքր է, իսկ մեր թոնիրը քանի՛ լօջ կըտանի, իսկ ամեն մի լօջը արևից ինչքան է մեծ:

ԳէՈՐԳ.—Օրի՜որդ, խնայեցէք ինձ... ինչե՞ր էք ասում:

ՄԱՆԻՇ.—Ի՞նչ է որ. նա ասում է՝ այս տարի երաշտ կըլինի, երաշտ է լինում. ասում է՝ չորութիւն կըլինի և չորութիւն է լինում. ասում է՝ հեղեղ կըլինի և լինում է. ասում է՝ հիւանդութիւն կըլինի պատերազմ կըլինի, երկրաշարժ կը լինի և լինում է:

ԳէՈՐԳ.—Իսկ աշխարհի վերջի համար զեռ ոչինչ գուշակութիւն չի՞ արել:

ՄԱՆԻՇ.—Այ, դուք ծաղրում էք, իսկ ձեր աւածններից ոչ մէկն էլ չի եղել զեռ:

ԳէՈՐԳ.—Շատ լաւ. գնացէք ուրեմն այդ տիրացու Գալուստի մօտ և նրանից սովորեցէք... իսկ ես կըգնամ, կըկորչեմ այստեղից:

ՄԱՆԻՇ.—Բայց դուք փոխանակ բարկանալու և երեխայի նման խռովելու, համբերութիւն ունեցէք չիմացողին ձեր կողքին նստեցնելու և բան սովորեցնելու:

ԳէՈՐԳ.—Ա՞յդ ինչ է. կըկնակօշկիս մէկը չկայ, իսկ միտը ծակտովմծ...

ՄԱՆԻՇ.—Ա՛յ, ա՛յ, ա՛յ: Երևի խողերն են կըծոտել:

ԳէՈՐԳ.—Բայց խողերն իմ սենեակում ի՞նչ գործ ունեն:

ՄԱՆԻՇ.—Հը՛մ, եթէ շունը պապիկիս հետ մանգալու գնացած չլինէր, նա նրանց ցոյց կը տար:

ԳէՈՐԳ.—Հը՛մ, շնորհակալ եմ... այսինքն խողերի զերը ինքը կըկատարէր: Ճանաչում եմ նրան:

ՄԱՆԻՇ.—Մեր շունը իմաստուն շուն է: Մի երեկոյ բակի մէջ կրակի շուրջը նստած էր մեզ հետ: Իբր եկաւ պապիկս գոչեց՝ «ա շուն, վերկաց, տեղդ համեցէք արա խնամուն»: Նա իսկոյն կատարեց հրամանը:

ԳէՈՐԳ.—Դէ լաւ, ես մեղայ Աստծոյ: Ճաշը շուտ կըլինի:

ՄԱՆԻՇ.—Երբ գզիր Օվանէսանց էջը կըզոայ:

ԳէՈՐԳ.—Աչքդ լոյս... իսկ եթէ նա չբարեհաճեց գոհլ:

ՄԱՆԻՇ.—Ինչո՞ւ չպիտի զոայ. նա ի՞նչ էջ է, որ իր պարտքը չհասկանայ:

ԳէՈՐԳ.—Ես ի՞նչ գիտեմ, գզիրի էջը սիրում է փիլիսոփայական մտքերի մէջ ընկնել. գոցէ այսօր էլ ինֆլուէնց ունենայ:

ՄԱՆԻՇ.—Այն ժամանակ համեցէք, երբ մեր լորի աքլորը կըթռչի ձեր պատուհանի վրա և կը կանչի կուկուրուկուկո՞ւ: (Ներկայացրեց և փախաւ աջ):

ԳէՈՐԳ.—Ա՛խ, դու գիւղական կարմրաթշիկ կօկէտ, կըսպանես դու ինձ: (Չերմակը սրբելով): Օհօ, գիւղի վաշխառուն էլ եկաւ: Աստուած ազատի չար լեզուից:

### Տ Ե Ս Ի Լ 3.

#### ԳԵՈՐԳ և ՄԱՐԳԱՐ

ՄԱՐԳԱՐ (մտաւ միջի դռնով):—Բարի աջողում, վարժապետ:

ԳԵՈՐԳ.—Աստծոյ բարին, պարոն Մարգար. ի՞նչ բարիդ հարցնենք:

ՄԱՐԳԱՐ.—Է՛հ, սև կատուն բողո ունենար, առանց ականջի կըծնվէր: Էդ սանահայրս էլ մեռնելու ժամանակ գտաւ: Եղբայր, երեք տարի է որը լակոտներին դլխիս է թափել, ինքը գնացել է էն կեանքից մի լուր բերի, էն գնալն է՝ գնացել է, էլ յետ չի գալիս: Աստուած սիրես, մի թուղթ գրիր, որ այգին ու մարագը պարտքի տեղ ինձ է անցնում:

ԳԵՈՐԳ.—Ես արդէն քանիցս պատիւ եմ ունեցել ձեզ յայտնելու, որ աւելի շուտ ես իմ ձեռքը կըկտրեմ, քան թէ այդպիսի անաստուած բաներ կըզբեմ: Աւելի շուտ այդ կեղտերի մասին ես աղմուկ կըհանեմ լրագրների մէջ:

ՄԱՐԳԱՐ.—Հա՛... է՛հ, չես կարող, մի գրիլ, էլ ինչո՞ւ ես նեղանում: Ի՞նչ անենք, իմ երախտիքը թող կորչի... ես մեղայ Աստծոյ: (Սորամանկօրէն): Էդ, ամօթ չլինի հարցնելը, ի՞նչ ես կնիկարմատի գործով զբաղվում:

ԳԵՈՐԳ.—Է՛հ, (չարունակելով սրբել) անիրաւ հաւերից գողար չունիմ:

ՄԱՐԳԱՐ (կողմ):—Ի՞նչ ասաց... հաւեր... Ըմմ, հասկացայ միտքը: (Նրան): Գիւղ տեղ է, ի՞նչ պէտք է անես:

ԳԵՈՐԳ.—Հա, ի հարկէ: Երբեմն մօտս հիւր են գալիս... (Դողարեց սրբելուց):

ՄԱՐԳԱՐ.—Չըմ... ուրեմն այդպէս հա՛...

Գէորգ.—Այո: Ի՞նչ կայ. մի ուրիշ կերպ էք հարցնում:

ՄԱՐԳԱՐ.—Ոչինչ: Ի հարկէ, անփորձ երիտասարդ ես, անմեղ, ազնիւ, մաքուր...

Գէորգ.—Գուցէ կամենում էք մի բան ասել:

ՄԱՐԳԱՐ.—Մեծ հեղեղի տարին գործակալ քահանան եկել էր պողի տուրք հաւաքելու... և էն գնալն էր, որ գնաց: Հասկացար:

Գէորգ.—Ի՞նչպէս թէ...

ՄԱՐԳԱՐ.—Այնպէս, սիրելիս... այսինքն որպէս թէ ուրեմն հեղեղը տարաւ...

Գէորգ.—Բայց ի՞նչու համար:

ՄԱՐԳԱՐ.—Հէնց մին էնպէս բանի համար, որ հիմա հրամանքդ ես անում:

Գէորգ.—Ոչինչ չեմ հասկանում:

ՄԱՐԳԱՐ.— Կըհասկանաս, կըհասկանաս: (Կողմ): Էնպէս թալակ քցեմ, որ աչքերը չուած մնայ: (Նրան): Ուրեմն այդպէս բան... թէ «հաւերը»... կարծեմ այդպէս հրամայեցիր:

Գէորգ.—Ախ, դուք հաւերի մասին էք հարցնում:

ՄԱՐԳԱՐ (կողմ):—Ուզում է խօսքը փոխի: (Նրան): Հա, ի՞նչ...

Գէորգ.—Այո, այո: Եւ ի՞նչ աներեսներն են. փո՛ւ, Աստուած ազատի:

ՄԱՐԳԱՐ.—Այսինքն, ուրեմն թէ, և որովհետեւ, և թէ ուրեմն իրանք իրանց ոտքոջն են դալիս, առանց մի որևիցէ... ակնկալութեան:

Գէորգ.—Ապա ի՞նչ. իմ սենեակում նրանց համար կըլտ պէտք է գնէի: Շատ հարկաւորս էր: ՄԱՐԳԱՐ.—Այսինքն թէ մինչև անգամ «կուտ» էլ չեն պահանջում:

Գէորգ.—Ի հարկէ: Երբեմն աներեսի նման ուղղակի պատուհանով...

ՄԱՐԳԱՐ.—Մինչև անգամ:

Գէորգ.—Այո, և այն էլ ուղղակի անկողնիս մէջ...

ՄԱՐԳԱՐ.—Ուղղակի անկողին... Ձէ, էստեղ արդէն բաները շատ են սպիտակացնում:

Գէորգ.—Դուռն ես կողպում՝ պատուհանով են մտնում, պատուհանն ես ծածկում՝ դռնով են մտնում. քիչ է մնում, որ երգկով մտնեն:

ՄԱՐԳԱՐ.—Բայց եթէ դու ազնիւ մարդ ես, ինչո՞ւ չես բոլոր ծակուծուկերը կապում:

Գէորգ.—Ես ի՞նչ մեղ ունեմ:

ՄԱՐԳԱՐ.—Ասե՛ք թէ, ի հարկէ. դու հօ չես գնում, այլ իրանք են գալիս: (Կողմ): Էս բոպէիս գնամ խանութիս առաջ հաւաքված բոլոր ժողովրդին յայտնեմ, որ իրանց կանանց կապերը մի քիչ քաշեն և սրա էլ դատաստանն անեն: (Նրան): Էհ, մնաս բարով:

Գէորգ.—Յոյս ունիմ, ինձնից չնեղացաք:

ՄԱՐԳԱՐ.—Բան չունե՛ս, ազնիւ մարդուց ի՞նչ նեղանալ: Մնաս բարով:

Գէորգ.—Է՛հ, բարով եկաք:

ՄԱՐԳԱՐ (կողմ):—Ես քեզ ցոյց կըտամ: (Գնաց):

## Տ Ե Ս Ի Լ 4.

## ԳԷՈՐԳ և ՈՍԿԻ (մտաւ աջ կողմից)

ԳԷՈՐԳ (գրքի նայելով և շրջելով):—«Կօրսիկա կղզիի մի չքաւոր ազնւականի որդի՝ Նապօլէօն առաջին, Բօնապարտը, երևելի աշխարհակալ և ստրատեգիկ, որի հանձարի առաջ խոնարհակցին իրանց ժողովուրդներով և զօրքերով շատ թագաւորներ և կայսրներ...»

ՈՍԿԻ.—Էլի դերն է տալիս խեղճը: (Հազայ): Ըհը: Էդ ի՞նչ է, որդի, էլի չլինի՞ թէ գլխիդ ցաւը շարժվել է:

ԳԷՈՐԳ.—Ձէ, մեծ մայրիկ, գլուես լաւ է, բայց կատարրս է նեղացնում:

ՈՍԿԻ (ձեռը նրա ճակատին դնելով):—Տեսնեմ, որդի, կարելի է տաքութիւն ունես:

ԳԷՈՐԳ.—Բայց կատարը ստամոքսիս մէջն է, այսինքն այստեղ, փորիս մէջ:

ՈՍԿԻ.—Մայրդ չմեռնի, խեղճ ես, ո՞վ է լըսել, որ կատարը փորի մէջ լինի:

ԳԷՈՐԳ.—Բայց կատարը առանձին ցաւ է:

ՈՍԿԻ.—Բոլոր խելքը տեղումը չլինողներն էլ այդպէս են խօսում: Հորէն, տես տաքութիւնդ որտեղ է հասել, որ ասել ես թէ (ձեռքով ցոյց տուեց) աշխարհը էդպէս, էդպէս պտոյտ է տալիս: Բեր, որդի:

ԳԷՈՐԳ.—Անհող կացէք, ինձ միայն մի լաւ ճաշ է պէտք. յետոյ ժողով ունեմ:

ՈՍԿԻ.—Երևի էլի պէտք է դառանցես, թէ անձրևը աշխարհի վրայի ջրերն են, որ շոգի են դառնում, գնում երկինք, անձրև դառնում, էլի յետ գալիս:

ԳԷՈՐԳ.—Ի՞նչ է, այդպէս չէ:

ՈՍԿԻ.—Ո՞վ է ինչ ասում... և որ երկրաշարժը երկրի տակի ոյժից է և ոչ թէ վերևից, այսինքն երկնային զօրութիւնի հրամանով (խաչ հանեց): Ի՞նչ ես կորցրել, ինչ փնտռում. ողջ գիւղը քեզ ծաղրում է, որդի:

ԳԷՈՐԳ.—Ծաղրում են ի՞նձ, երբ ես իմ երիտասարդ կեանքն եմ մաշում նրանց համար. երբ ես ոսկի գիտութիւնից եմ խօսում. երբ ես կամենում եմ բացել նրանց թմրած մտքերի ուշքը. երբ ես կամենում եմ հրաշք գործել:

ՈՍԿԻ.—Մեղայ Աստծոյ, մեղայ Աստծոյ: Հրաշք:

ԳԷՈՐԳ.—Այո, հրաշք:

ՈՍԿԻ.—Դէ ասս հէնց մարգարէ ես էլի: Բեր աղօթեմ, որդի:

ԳԷՈՐԳ.—Այո, ես մարգարէ եմ. ես եկել եմ կոչ անելու, որ գիւղը զարթնի:

ՈՍԿԻ.—Ձարթնի թէ չէ, ո՞ր կողմ պիտի գլորվի, ձորն ի վէր, թէ՞ սարն ի վեր:

ԳԷՈՐԳ.—Այսինքն ես կոչ եմ անելու, որ մարդիկ զարթնեն:

ՈՍԿԻ.—Բայց քանի որ գգիր Օվանէսը չի ասակել և ոչ էլ զանգելու համար ժամհար Մոսէ-

սի ձեռքերը գունտ կտրել, դու ինչո՞ւ պիտի կո-  
կորդիդ գոռ տաս: Բեր աղօթեմ ասում եմ: Այ,  
աղն էլ ափիս մէջ: Բեր:

ԳէՈՐԳ.—Օխ, չեմ պրծնելու ձեռքիցդ: Հը՛  
(խոնարհեց գլուխը, մտքի մէջ մոմալով): «Նրա լեզէօն-  
ները...»

ՈՍԿԻ.—Ի հարկէ, հեշտ բան չի գլուխ դնել  
էնքան լակոտների հետ: (Սկսեց աղօթել, մոմալով):  
«Չար աչքից, չար լեզուից...» (յօրանջելով) ուէ,  
ուէ, ուն, ա, ա, ա, ա, քշի, թշի, փշի: Վնւյ,  
ինչպէս չար աչք է եղել: Դղումի կպած լինէր,  
հարիւր պատառ կանէր: «Չար սատանից, չար  
դեերից, մէկ ծիտ ունեմ...» վուէ, վուէ, վէ, վէ,  
վէ, իշի, թշի, փշի: Թիւ, թիւ, թիւ: Իսկ որ կա-  
տարդ կրակի մէջ այրվում է:

ԳէՈՐԳ.—Եւ ես յիմարս եկել եմ՝ այստեղ  
անտախապաշտութիւնների և նախապաշարունակների  
դէմ կռիւ մղելու: Շնորհակալ եմ:

ՈՍԿԻ.—Դու դեռ սպասիր: (Գնաց աջ):

ԳէՈՐԳ.—Էլ ի՞նչ պիտի անի: «Վանդօմի  
ձակատամարտում...»

ՈՍԿԻ (եկաւ աջից մի կուժ ջուր ձեռին):—Խմիր,  
որդի:

ԳէՈՐԳ.—Բայց ես ծարաւ չեմ, այլ քաղ-  
ցած. մի ժամ է էշի մեղեդիին եմ սպասում: Փնւ,  
այս ի՞նչ կեղտոտ ջուր է. բերանիս չեմ էլ մօ-  
տեցնիլ:

ՈՍԿԻ.—Կըմօտեցնես, սիրելիս, կըմօտեցնես:



Սրան աղօթած ջուր կտան. աղը քցել եմ կրակը,  
որ չար աչքը կուրանայ, կրակից էլ երկու պող  
քցել եմ այս ջրի մէջ, որ կատարդ զօրանայ:

ԳէՈՐԳ.—Բայց դուք անուխի տեղ սատա-  
նան դիտէ թէ ինչ էք այրում... (ճպեց աչքերը):  
«Բայց օդնութիւնը եկաւ գերմանացոց կողմից  
Նիւսօնին»: (Խմեց): Թիւ, կովի հոտ:

ՈՍԿԻ.—Անոյշ մարսական, որդի. այս ջուրը  
սուրբ է մեռ (խմեց բոլորը) նեմ սուրբ զօրութեանը,  
իսկոյն կըլաւանայ կատարդ: (Գնաց աջ):

Տ Ե Ս Ի Լ 5.

ԳԵՈՐԳ և ԱՌԱՔԵԼ

ԱՌԱՔԵԼ (եկաւ միջի դռնով և մեծակոկորդ որո-  
տող ձայնով):—Էյ դ՞ու, լի՛ր ձայնս հրեղէն: Ո՞վ ես,  
ասա, ով հողեղէն:

ԳԵՈՐԳ (կողմ):—Հըմ, երևի հարբած է: (Նրան):  
Ի՞նչ է պատահել: (Մամտում է):

ԱՌԱՔԵԼ.—Ես տանուտէր Առաքելս, որ լի-  
նեմ հօրս կողմանէ թոռն Տէր Ասատուրայ, իսկ  
մօրս կողմանէ նման թուրի կտրիչ բանաստեղծ  
տանուտէր Խաչատուրի. որ լինեմ եղբայր 7 քրոջ  
և 14 եղբոր, բոլորն էլ մտքով ոչ ինձ նման քոռ.  
որ կնիկս լինի մաքուր մածնա... թիւ, այսինքն  
մաքուր կաթնակեր, անուճը Ոսկի, տէր քաղցր  
խօսքի, և որ իմ աղջիկ թոռնիկս է ինքը շամես-  
տութիւնը, անուճը Մանիշակ, աղջիկներին օրի-  
նակ, և որ մտքումս դրել էի... այսինքն ես ան-

1001  
95

զաւակ և քեզ... ի հարկէ սիրելով... և նրան էլ...  
թէ ուրեմն հա... Բայց սրանք մնայ: Ո՞վ ես դու,  
սով հրեղէն... այսինքն թիւ, սով հողեղէն:

ԳէՈՐԳ. (շարունակելով).—«Սուրբ Ելէն կղզիի  
մեծն կայանաւորը...»

ԱՌԱՔԵԼ.—Քեզ հարցնում է Քրիստոսի ծա-  
ռան, որ լինենք ուրեմն թէ մենք... ո՞վ ես դու:

ԳէՈՐԳ. (ինքնիրան գրբի մէջ նստելով).—«...որի  
առաջ խոնարհվեցին շատ հզօր ազգեր...»

ԱՌԱՔԵԼ.—Քանի՞ գլուխ ունես դու, ասա  
ինձ: Չե՞ս իմանում: Որ հրամայեմ, իսկոյն ժո-  
ղովուրդս քեզ կըզգզղի, ինչպէս շները գայլին  
են զզգզում, երբ որ նա գալիս է ոչխար գողա-  
նալու: Սև երես ես, հո՞, չե՞ս պատասխանում,  
քաղաքացի ազնիւ սրիկայ, երեսանց քահանայ,  
տակնուց սատանայ:

ԳէՈՐԳ.—Տանուտէր Առաքել, գնացէք պառ-  
կեցէք:

ԱՌԱՔԵԼ.—Դու իմ գլխատակին բարձ գնել  
չես կարող, ամբարտաւան քաղաքացի. ուզում ես  
ձիւն պոչիք կապել տամ քեզ: Թէ՞ կարծում ես  
խմել եմ օղի գաղտագողի:

ԳէՈՐԳ.—Գնացէք հանդատացէք... այդ շատ  
լաւ կըլինի: «Այս պերիօզը կոչվում է հարիւրօ-  
րեայ թագաւորութիւն»: (Պառկեց):

ԱՌԱՔԵԼ.—Բանն այդտեղ հասաւ, հո՞: Շատ  
լաւ: (Գլուխը հանեց պատուհանից դուրս, կանչեց բարձր):  
Հէ՛հէ՛հէ՛յ, գզիւր Օվանէս, հէ՛յ, հէ՛յ:

(Գզիւր Օվանէսի ձայնը հեռվից. — «Հէ՛յ, հէ՛յ, հէ՛յ.  
Էստեղ եմ, էստեղ, հէ՛յ, հէ՛յ»):

ԱՌԱՔԵԼ.—Ա՛յ տղայ, հէ՛յ, հէ՛յ. ինչպէս քեզ  
ասել եմ է, ասել. Մարգարի խանութի առաջ որ  
ասացի, կտուր բարձրացիր, կտուր. կոչ արա՛, հէ՛,  
կոչ, կոչ. թո՛ղ ժողովուրդը էս բոպէին հաւաքվի  
ինձ մօտ, հէ՛հէ՛հէ՛յ: (Բարկացաւ):

(Գզիւր Օվանէսի ձայնը. «Աչքիս վրա, միամիտ  
եղիր, միամիտ»):

ԱՌԱՔԵԼ.—Մենք կըխօսենք: Քալին չի մե-  
ռել, ցաքատը չի կորել: (Մեծ-մեծ): Էս է ժողով  
կըլինի, և մենք կըխօսե՛նք: (Գնաց աջ):

(Գզիւր Օվանէսի ձայնը հեռվից. «Է՛հէ՛հէ՛հէ՛ հէ՛յ.  
Ժողովուրդ: Հրամման է, հէ՛հէ՛յ, շուտ. կարճիկ  
Արիստակէս, երկայն Մոսէս, թուրքացած Սաչա-  
տուր, Սիրիւրից փախած Ասատուր, բրուտ Մար-  
կոս, ջորեպան Կիրակոս, սափրիչ Մինաս, քար-  
տաշ Մանաս, որսկան Արգար, խանութպան Մար-  
գար, ոտքը Բագվում կորցրած Օհան, Թիֆլիսում  
բանտ նստած Ստեփան. բաց ասեմ, ոչ ամաչեմ,  
ոչխարի գող, տաւար փախցնող, դէզ կրակ տվող,  
սուտ երզվող, սրբի տուն քանդող, օձ բռնող, էձ  
պարացնող, խուլ ու կաղ, կոյր ու ճաղատ, համր  
ու թլվատ, սաղ ածող, պնդըլ ասող, անեկ, պու-  
լիկ, տաւարածի կնիկ, տնահաւան, շահաւան,  
հրաման է հէ՛հէ՛յ. էս բոպէիս հաւաքվեցէք տանու-  
տէր Առաքելանց տուն. մեծ ժողով է, խիստ դա-  
տաստան: Հաւաքվեցէք տանից մէկ, երկմ, թէ

կարենաք՝ հէնց տամներկու. շոտ արէք, էլ մեխակի մի սպասէք. հետներդ էլ մի-մի գոմէշի ճիւղոտ առէք, հէհէյ):

ԳէՈՐԳ (զարթնեց):—«...Եւ այժմ նրա ոսկերքը հանգստանում են Պարիզի Ինվալիդների տաճարի մէջ» (Գիւրգը զրեց մի կողմ ու ելաւ):

## Տ Ե Ս Ի Լ Ը.

### Գ Է Ո Ր Գ Ի և Ն Ա Ն Ա Շ

ՆԱՆԱՇ (եկա բորիկ, ճիւղոտ ձեռքին, մէջտեղի գնում):— Ի՞նչ կըտաս, էս փափուկ ճիւղոտով ընկնեմ էդ քնքուշ-մնքուշ պահած մարմնիդ էնքան տամ, որ ծկլթոցդ մօրդ ականջին հասնի:

ԳԷՈՐԳ.— Քեզ ինչ է պատահել, Նանաշ տատիկ:

ՆԱՆԱՇ.— Իմ որդիս սր երեխից է վատ. հը՞, սր երեխից:

ԳԷՈՐԳ.— Չգիտեմ... նրանք բոլորն անխտիր իմ սիրելիներն են:

ՆԱՆԱՇ.— Երևի նրա համար, որ ես աղքատ եմ, առաջի ատամս ընկած, հա՛: Երևի լսել ես, որ տանս մէջ էն ապակիի կտորից... էն, որ հայելի էք ասում... նրանից չկայ, որ քեզ դուր գալու համար թշերիս սև թուփ քսեմ, աչք-ուներիս խանձուղ, ձեռքերիս ալիւր, հա՛: Երևի լսել ես, ձեռք ու ոտքերս լուանալու սապոն չուենեմ, որ ձգմզտացող փափուճներ չուենեմ, որ շատ անգամ ծմակից ցախ բերելու համար՝ կոտրած ցաքաթը

գօտկիս քաշած, գիւղամիջի էշը հեծած, բորիկ ոտքով եմ գնում, հա՛:

ԳԷՈՐԳ.— Բանը ինչո՞ւն է:

ՆԱՆԱՇ.— Թէ՛ նրա համար, որ ողջ ունեցածս մի կոծկած կուժ է, երկու պուլիկ. մի ճաքած կուժ է, երկու իլիկ. մի լեսեոն է, մի քըլըկիչ. մի ճախարակ, մի կթիչ. մի սանդեք է, մի մաճնաման. մի քոսոտ շուն, մի լակաման. մի հաւաթառ, երկու ձուտ. մի կժի տակ՝ մէջը կուտ. մի մորթի է տակս քցելու, մի քրտի է տակը մանելու. մի օխով է խմոր բացելու, մէկ էլ էս ճիւղոտը շանը ծեծելու: Ասա էլի, ասա՛ այլի Նանաշ, պատճառն էն է, որ որբեայրի ես, աղքատ, անտուն, անտէր:

ԳԷՈՐԳ.— Իմ խեղճ, թշուառ, ողորմելի գեղջկուհի քոյր: Ինչո՞ւ ես կարծում, որ քո որդուդ ես ամենից շատ չեմ խղճում և սիրում: (Փող տուաւ նրան): Ա՛, քոյրս... բայց ոչոքի չյայտնես:

ՆԱՆԱՇ.— Ա՛յ Աստուած կեանքդ երկարացնի, որդի:

ԳԷՈՐԳ.— Միայն թէ սաստի՛ր, խրատ տուր նրան: որ սուտ չխօսի:

ՆԱՆԱՇ.— Տեսնում էք էդ լակոտը ինչքան է խաբում ինձ: (Ցնցօտի մէջ փողը կապեց):

ՄԱՆԻՇ (մտաւ աչից. նոյն բոպէին լսեց իշի գոց):— Վարժապետ, ճաշը պատրաստ է: (Յետ գնաց. նրան հետեց Գիւրգը):



## ԵՐԿՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Նոյն տեսարանը

**ՆԱՆԱՇ, ՄԻՆԱՍ, ԽԱԶՍՏՈՒՐ** փայլուն գլուխով, **ՄԱՐԳԱՐ, ԳԻԻՂԱՅԻՆՆԵՐ, ԳԵՂՋԿՈՒՀԻՆՆԵՐ, ՄԻ ԱՇԱԿԵՐՏ** ոտքը կապած, **ՄԻ ԳԻԻՂԱՅԻ** ոտքից զուրկ, **ԱՇԱԿԵՐՏՆԵՐ:**

**ՄԻՆԱՍ** (որ աջ դռնով նայում էր):—Սը՛ս. ժողովուրդ, հանդարտ. տանուտէրը հացի է նստած, ուրեմն պարապ չի, ինչպէս սափրիչը ամեն երկուշաբթի: Ե՛յ, կէկչի Յական, ոտը կազ ջաղացպան, յետ, յետ: Դու էլ, էյ, տէրտէրի առաջին տրտինգ տուող քուռակ, մի քիչ յետ: Աղջի, գիժ Մաքան, էդ ի՛նչ շուտ շընթոնեցիր. ոտքի կանգնիր: Յետ, յետ, յետ: (ձիպոտով բազ բռնել տուաւ):—Սաչատուր ապեր, էդ ինչ՞ու է քիթ ու պոռնուգը արիւնոտ:

**ԽԱԶՍՏՈՒՐ.**—Ոչինչ. Աստուած քո էլ որդիքդ զօրացնի, փոքր տղաս է խփել: (Ընդհանուր հսոսոց): Ժողովուրդ, լսողութիւն: (Լռեցին): Էսօր տիրացու Գալուստը մեր վարժապետին էքզամէն է անելու:

**ՄԻՆԱՍ.**—Էն, որ մազմիրուքը նահանջ տարիից նահանջ տարի է խուզել տալի՞ս:

**ԱՇԱԿԵՐՏՆԵՐ** (փստացնելով ծիծաղեցին):

**ԽԱԶԱՏՈՒՐ.**—Դուք էստեղ գործ չունէք. զանգուլակը տուէք, հաւարվեցէք սըմարան: Ես ձեր հասակումը բաղնիսում տկլոր էի մանգալիս: Վարպետ Մինաս, էդ Բնչ ես գլխիս մտիկ անում:

**ՄԻՆԱՍ.**—Ոչինչ. սափրիչի աղօթքը Աստուած որ լսի, ճաղատի գլխին արջի մորթի կը բուսնի:

**ԽԱԶԱՏՈՒՐ.**—Ժողովուրդ, լսողութիւն: Ձեզ յայտնի է, որ երկու տարի է մեր գիւղում մարդագէլ է յայտնվել և քանի երեխայ փախցրել:

**ԺՈՂՈՎՈՒՐԴ.**—Պէտք է թագաւորին խընդրել, որ գանձարանից մեզ փող բաց թողնեն: (Կրկնում են):

**ԽԱԶԱՏՈՒՐ.**—Լսողութիւն: (Լսեցին): Նոյնպէս ձեզ յայտնի է, որ էս է երկու տարի է մեր գիւղի գլխից փորձանքը անպակաս: Նախ՝ առաջի տարին չորութիւն, իսկ էս տարի էլ թացութիւն:

**ԺՈՂՈՎՈՒՐԴ.**—Էդ մեր մեղքի համար է: (Կրկնեցին):

**ԽԱԶԱՏՈՒՐ.**—Լսողութիւն: Ես իմ կարճ խելքովս էնպէս եմ կարծիք անում, որ պէտք է աղօթքի դուրս եկած:

**ՄԻՆԱՍ.**—Անցեալ տարի էլ դուրս եկանք, մասունք հանեցինք, բայց փոխանակ անձրևի՛ կարկուտ եկաւ:

**ԺՈՂՈՎՈՒՐԴ.**—Ողջ մեր մեղքից է. Աստուած մեզ վրա բարկացել է...

**ՄԻՆԱՍ.**—Իհարկէ, կըրարկանայ. նոր այ-

գելիս ողջ խաղողի որթերն են կտորել. մօրս կաթը վկայ, վարպետի աղջիկը հիմի էլ լաց է լինում: Ապա էս մարդին Բնչ կասէք. միթէ Աստուած վեր կառնի. խեղճի 24 պատրաստի կուժն են կտորել, 6 խնոցին, 3 կարասը, 14 կուլան, 25 կուլկուլիկը:

**ՄԱՐԳԱՐ.**—Հէնց իմ ձիս պատմութիւնը ասես, որ օր-ցերեկով խեղճ անասունի պոչը կըտրեցին:

**ՄԻՆԱՍ.**—Իէ աստուածաւորի խօսած, դու էլ մարդ չի մնացել, որ դաղած չլինես:

**ՄԱՐԳԱՐ.**—Էդ է, էդպէս էք խօսում, որ վարունգը ծուռ է բուսնում է: Ուրիշների արածները ասնելու համար աչքներդ է քոռանում:

**ԽԱԶԱՏՈՒՐ.**—Ժողովուրդ: Լսողութիւն: Էդ, անաստուած բաները քիչ էր, հիմի էլ մեր գիւղում մի նոր մարդ է յայտնվել, որ ուզում է ամբողջ մեր գիւղի անունը տափը կոխի:

**ԺՈՂՈՎՈՒՐԴ.**—Մենք նրան հում-հում կուտենք, թոնիր կըքցենք, շանսատակ կանենք:

**ՄԻՆԱՍ.**—Տղերք, սոս. Խաչատուր ապերի գլուխը վկայ, որ ողջ սուտ է:

**ԽԱԶԱՏՈՒՐ.**—Պահ, ուրեմն էս ահագին մարդուն չէք հաւատում, որ կայ:

**ՄԱՐԳԱՐ.**—Ես ձեզ ասում եմ կայ և կը հաստատեմ, որ կայ:

## Տ Ե Ս Ի Լ 2.

ՆՐԱՆՔ, ԱՌԱՔԵԼ, յետոյ ԳէՈՐԳ և յետոյ  
էլ ՕՎԱՆԷՍ

ԱՌԱՔԵԼ (գունաւոր մեծ թաշկինակով հաստ բե-  
զերը սրբելով և գոռալու նման ծիծաղով մտաւ աջից):—  
Հանձնան... (Մարգարին): Այ ես քո գլուխը հողեմ,  
որ լինես ուրեմն թէ մեր գիւղի ամենախելօքը և  
ոչ-բարով պատուաւոր վաճառականը...

ՄԻՆԱՍ.—Ի՞նչ է պատահել, տանուտէր  
Առաքել:

ԱՌԱՔԵԼ.—Հանձնան, այ սրա վիղը չճավի,  
խեղճ է, հանձնան: Քո տունը երկնային Տէրը չկոր-  
ծանի, խեղճ ես... հանձնան:

ԽԱՉԱՏՈՒՐ.—Ախար ի՞նչ է պատահել է...  
Տէր, մեղայ Բեզ, Աստուած, հա՛:

ԱՌԱՔԵԼ.—Հանձնան... վայ փորս տրաքեց...  
վայ, վայ, էլ ինձ մի խօսեցնէք, ինձնում ոյժ  
չմնաց... Կանչիր վարժապետին այստեղ... այ, էյ,  
ը՛մ, հը՛մ, փ՛րու: (Նստեց նախագահի տեղը):

ԳԷՈՐԳ (եկա աջից):—Ողջոյն համայնքին:

ԱՌԱՔԵԼ.—Դու հօ իմանում ես, թէ ինչ բա-  
նի համար են հաւաքվել...

ԳԷՈՐԳ.—Ինչ բանի համար էլ որ լինի, ես  
պատրաստ եմ: Համեցէք:

ՄԻՆԱՍ.—Ժողովուրդ, ճանապարհ տուէք,  
գլխի Օվանէսն էլ եկաւ:

ՕՎԱՆԷՍ (մտաւ միջի դռնով մահակի ծայրին մի

պատած կրկնակօշիկ):—Հէյ ժողովուրդ, երեսներդ  
խաչակնքեցէք, մեռնեմ սուրբ զօրութիւնին. պէտք  
է քննած և տեսած, թէ սա որ սուրբի հողաթափն  
է և ի՞նչ գործ է ունեցել այրի նանաշի դռանը և  
էնտեղ գիշերի որ ժամին և ի՞նչ աղօթքի համար  
է եղել գնացած:

ԱՌԱՔԵԼ.—Այրի նանաշը մէջ տեղ դայ:  
(Նա եկաւ): Ժողովուրդ, եթէ էս կնիկը մեղաւոր  
դուքս եկաւ, ի՞նչ պատիժ տանք սրան:

ԽԱՉԱՏՈՒՐ.—Մեր պապական օրէնքով ե-  
րեսին ալիւր քսել, յետ նստեցնել աւանակի վրա,  
պոչը տալ ձեռքը և գիւղի փողոցները ման ածել:

ԱՌԱՔԵԼ.—Շատ լաւ: Դէ խօսիր, նանաշ-  
էդ ի՞նչ պատմութիւն է:

ՆԱՆԱՇ.—Գլխի իրա քոտտ գլուխը շատ  
քարերոջն է տալիս: Խոզի ձագ, սա էլ էն չի, որ  
երկու հաւս ես գողացել:

ՕՎԱՆԷՍ.—Աղուէսին լաւ փաթաթեցինք  
պոչներին:

ՄԻՆԱՍ.—Տանուտէր, լաւ չէր լինիլ մի քիչ  
գրաբար խօսէիք, որ երեխաները բան չհասկա-  
նային:

ԳԷՈՐԳ.—Բայց այստեղ մի գաղտնիք չկայ.  
սա իմ կրկնակօշիկն է:

ԺՈՂՈՎՈՒՐԳ.—Մանու, մու, մու:

ԱՌԱՔԵԼ.—Լոկեցէք, արջի լակոտներ, խոզի  
կոճիկներ: (Լոկեցին): Գլխի Օվանէս, դու ոչ խղճմը-  
տանք ունես, ոչ էջմիածին: Թէ չես ուզում, որ

էս ըոպէիս քեզ ցցի հանել տամ, ճշմարիտն ասա-  
սա էլ էն չլինի, մօր կաթը կտրած, որ Ասծա-  
տուր քաւորիս գինիի կարասի մէջ մուկ էիր  
քցել: Խօսիր, թան լակած շուն:

**ՕՎԱՆԷՍ** (ձեռքի փայտը գլխի վրա հորիզոնական  
զիւրքով բռնեց և պարի եղանակ մոմուլով սկսեց պարել):—  
Ը՛հ՛ը՛մ, մը՛հ՛ը՛մ, գիւղամիջի—ճահճի միջից—էլ հն-  
սեկ եմ—էդ տրեխը:

**ՆԱՆԱՇ.**—Հնչ օգոստոսի աղուէս... Ճիւղտը  
քաշած՝ աղմուկով հոհողի մէջ երկու պոսոյս անելով, փախ-  
ցրեց նրան միջի դռնով):

**ԱՌԱՔԵԼ.**—Բռնեցէք էն անզգամ լակոտին:  
(Մի երկուսը գնացին ետեից):

**ՄԻՆԱՍ.**—Ճանապարհ, ժողովուրդ, ճանա-  
պարհ, բրդոտ Գալուստը գալիս է:

### Տ Ե Ս Ի Լ 3.

#### ՆՐԱՆՔ և ԳԱԼՈՒՍ

**ԳԱԼՈՒՍ** (եկաւ միջի դռնից, աչքը գետնին քը-  
ցած, շարակին շորի մէջ մի ահագին գիրք: Լոութիւն):—  
Լսել եմ, որ մեր գիւղում երկնքից մի աստղ է  
վէր ընկել, ուրեմն թէ մի գիտնական, որը հա-  
ւատացնում է, որ իրան յայտնի է, թէ էստեղից  
միջնչև արեգակ քանի թիղ է... և որ Իտալիայում  
Աստուծոյ կարկտի դէմ շանթարգել են հնարել...  
և որ աստղեր կան, որ մեր աշխարհից մեծ են...  
և որ աշխարհը կըր է և մէջը կրակ: Կարելի՞  
է նրա հետ ծանօթանալ: (Ծիծաղ):

**ԱՌԱՔԵԼ.**—Լոութիւն: Կարելի է, տիրացու

Գալուստ. համեցէք, հորէս մեր վարժապետը:

**ԳԱԼՈՒՍ** (ձեռքը մեկնեց Գեղղին):—Դեռ պէտք  
է երեսին չմտիկ տուած: Կարելի՞ է արդեօք,—  
ը՛հ՛ը՛մը՛հ՛ը՛մ, որովհետև մենք էլ մեզ նայած ուրեմն  
թէ մի մարդ ենք, մարդու տղայ,—կարելի՞ է, որ  
էդ իմաստուն պարոնին մի երկու պստիկ-մստիկ,  
պուճուր-մուճուր հարց էլ մենք տանք:

**ԳԵՂՂ.**—Կարելի է, տիրացու, համեցէք:

**ԳԱԼՈՒՍ** (մէջքը արաւ նրան):—Դէ ուրեմն  
խնդրեմ բնուս մի քիչ թեթևացնէք:

**ԳԵՂՂ.** (օգնեց զիրքը դնել սեղանի վրա):— Այդ  
ի՛նչ գիրք է, տիրացու:

**ԳԱԼՈՒՍ** (համբուրեց և սկսեց քչուուր բացել):—  
Վոշը... մոնըմ սըփ զբըըթընը (ոչինչ, մեռնեմ սուրբ  
զօրութիւնին), Այսմաուրք է: Ուրեմն էտ գիտնա-  
կանը դուք էք: Լաւ: (Բերանը հուպ տալով և մի կողմ  
ձուլով): Ասում են, երբեմն լուրը դուք երկնքի  
աստղերից էք բերում, երբեմն ծովերի տակից և  
երբեմն էլ աշխարհիս խորքերիցն, (տնազով) որ-  
տեղերքումը որ, ինչպէս էլ հրամանոցդ էլ յայտ-  
նի կըլինի, ոչոք դեռ չի եղել, որովհետև աղա-  
մորդին ոչ որդն է, ոչ թոչուն և ոչ էլ ձուլին...  
Բայց սրանք թողնենք: Ժողովուրդ, ես էդ մար-  
դուն շատ փոքրիկ հարց եմ տալու (ցոյց տուաւ  
ձեղոյր): Էն կնիկը, որ սուրբ Ստեփաննոս նա-  
խավկային քարկոծողների համար իրա փեշումը  
քար էր բերում,—մեռնեմ սուրբ զօրութիւնին,—  
կարո՞ղ էր արքայութիւն գնալ, թէ ոչ:

ԱՌԱՔԵԼ.—Հմհմհմ, դժվար հարց տուաւ, Աստուած վկայ:

ԳԷՈՐԳ.—Ոչ մի մահկանացու չպէտք է համարձակվի ասել այո կամ ոչ, որովհետև հոգիներէ տէրը մարդը չէ, և այնտեղից ոչ մի մարդ յետ չի եկել:

ԳԱԼՈՒՍՏ.—Ուրեմն ձեր ասելով սուրբ գիրքը սճւտ է ասում, մեռնեմ սուրբ զօրութիւնին:

ԽԱՉԱՏՈՒՐ.—Նա սուրբ գրքին չի հաւատում... (Ժողովուրդը մոմոաց):

ԳԱԼՈՒՍՏ.—Սա մնայ: (Շրջան արաւ): Այն ի՞նչ է, որ արեւի տակ անշուաք է. նա ի՞նչ է, որ իր բնի մէջ անշուաք է:

ԳԷՈՐԳ.—Լոյսը, ապակին, ջրհորը, ես ի՞նչ գիտեմ...

ԳԱԼՈՒՍՏ.—Հէր օրհնած, էլ ինչո՞ւ ես բարկանում, էդ հէնց ջրհորն է էլի: (Ոգևորվեց): Էն սր թըռչունն է, որ ամեն տարի կրակ է բռնում, այրվում, մոխիր դառնում ու նոր մէկանց իրա մոխրի միջից զարթնում, թեւաւորում և թռչում է գնձում, հէյ:

ԳԷՈՐԳ.—Ֆէնիկս:

ԳԱԼՈՒՍՏ.—Փէնիկըս. ուրեմն կո՞յ. էդ լաւ է, որ չէք ասում թէ չկայ, այլ ասում էք թէ կայ: (Պարծանքով): Փէնիկըս թռչունը: Լաւ: Ուրեմն կարելի է ասել մենք էլ ենք մի բան հասկանում: (Ժողովուրդը աղած հաւանական նշաններ է անում):

ԳԷՈՐԳ.—Բայց սա լեզենդա է, տիրացու, այսինքն աւանդութիւն:

ԳԱԼՈՒՍՏ (չհասկանալով).—Շատ լաւ, թող լինուկէն-դա լինի: Հիմիկս էլ մին նոր բան: (Բերանը ծած, առանձին ոգևորութեամբ շրջան արաւ և յանկարծ կանգ առաւ): Երբ որ Մովսէս մարգարէն,—մեռնեմ սուրբ զօրութիւնին,—կարմիր ծովը անցնում էր, ի՞նչ կար նրա շալակին կապած:

ԳԷՈՐԳ.—Ես հրէից պատմութիւնը պարտաւոր չեմ լաւ իմանալ: Դուք հարցրէք իմ ազգի պատմութիւնից:

ԳԱԼՈՒՍՏ.—Ուրեմն ձեր ասելով Մովսէս մարգարէն հո՞յ չի եղել:

ԳԷՈՐԳ.—Իհարկէ ոչ: (Ժողովուրդը հռնաց):

ԽԱՉԱՏՈՒՐ.—Նա ասել է Քրիստոսն էլ հայ չի եղել:

ԳԱԼՈՒՍՏ.—Էդ սր Քրիստոսը... (Հռնաց):

ԳԷՈՐԳ.—Քանի՞ Քրիստոս է եղել: (Աղմուկ):

ԱՌԱՔԵԼ.—Լուութիւն: (Լռեցին):

ԳԷՈՐԳ.—Ես այդ տեսակ յիմար հարցերի չեմ պատասխանիլ:

ԳԱԼՈՒՍՏ.—Ի՛ր... այդպէս եղաւ, հա: Մենք յիմար եղանք, դուք իմաստո՞ւն: Էդ է, էդպէս բաներ էք անում, որ քըլորի տեղ հաւն է կանչում, աշխարհքի վերջը մօտեցնում: Ծակ ու ծուկում ժողովրդին անհաւատութիւն էք քարոզում, մեզ հետ վէճից փախչում... Սա է ձեր խելօք վարժապետը... սա է, ժողովուրդ:

ԳԷՈՐԳ.—Բայց ես ձեզ հետ կարող եմ խօսել միմիայն գիտութեան անունից: Ես եկել եմ

կուելու ձեր այդ խաւար և հնացած մտքերի դէմ. ես բերել եմ ձեզ համար լոյս և ճշմարտութիւն. ահա և իմ գիրքը: (Վերցրեց մի «յլ գիրք»): Նայեցէք թէ ինչ է ասում նա...

ՄԻՆԱՍ.— Շը՛շ... Խնդրում ենք բացատրէք մեզ, թէ ի՞նչ է ասում նա:

ԳէՆՐԳ.— Այո՞, վարպետ: Շատ լաւ: Նա մեր ձեռքը տալիս է զէնք, որ մենք կուենք անասունների, մարդկանց և մանուկների տարախոխիկ հիւանդութիւնների դէմ:

ՄԻՆԱՍ.— Ա՛յ մեզ ինչ է պէտք:

ԳէՆՐԳ.— Նա մեզ տալիս է միջոց, որ մենք ազնւացնենք մեր հացահատիկների, պտուղների, շերամի, գինիների, անասունների և մեր ձեռագործների տեսակները:

ԱՌԱՔԵՆ.— Ապրես, որդի... էդ շատ լաւ բան է, խաչելութիւնը վկայ:

ԳէՆՐԳ.— Նա մեզ ասում է, որպէսզի ձեր սայլերը չկոտրվեն և զրաստները չնեղանան, կապեցէք գիւղերը իրար հետ լաւ ճանապարհներով. նա ասում է, որպէսզի ձեր գետինը մեռած չմնայ, անցկացրէք առուներ. որպէսզի վաշխառուների և հարստահարիչների ձեռքին գերի չմնաք, հիմնեցէք գիւղական բանկեր. նա ասում է՝ բացեցէք հիւանդանոցներ, համայնական արհեստանոց. խընամութիւն արէք հեռաւոր տեղերի հետ, որ ազնւանայ ձեր ցեղը: Նա տալիս է մեզ գիւղատընտեսական նորանոր ձևի գործիքներ, լաւ իւղ,

սեր և պանիր պատրաստելու համար: Նա նոյնիսկ ցոյց է տալիս, թէ ինչպէս մի թիզ հողի վրա կարելի է վարել մի հատիկ ցորեն և ստանալ 20—30 հասկ 7—800 հատիկ ցորենով: Նա մեզ ասում է՝ զարթեցէք պառաւական քնից, հերիք է որքան թմրեցնող առասպելներով ձեր գլխի տակ փափուկ բարձ գրին: Ես եկել եմ կոչ անելու՝ թող զարթնի գիւղը, նրա թարմ երիտասարդութիւնը, նրա մատաղ սերունդը: Ամբողջ լուսաւոր երկրների գիւղացիութիւնը զարթնել է, զարթիւր և դու, իմ թմրեալ հայրենի ժողովուրդ... Ինձ այստեղ մղողը անկեղծ սէրն է դէպի քեզ, սէրը դէպի վեհ և սուրբ գաղափարը:

ԱՌԱՔԵՆ.— Սրան ի՞նչ կասես, տիրացու:

ԳԱՆՈՒՍՏ.— Քանի որ իմ հարցին պատասխան չեղաւ... (Ուզեց գնալ):

ԳէՆՐԳ.— Սպասեցէք, տիրացու: Ես տեսնում եմ, որ դուք կարող էք օգտակէտ մարդ լինել ինձ համար: Եթէ ես ձեր հարցին պատասխանեմ, խօսք տալիս էք, որ ինձ կաջակցէք:

ԱՌԱՔԵՆ.— Խօսք տուր, տիրացու Գալուստ...

ԺՈՂՈՎՈՒՐԳ.— Խօսք տուր, խօսք տուր:

ԳԱՆՈՒՍՏ.— Ես համայնքի և տանուտէրի խօսքը չեմ կոտրել:

ԳէՆՐԳ.— Առասպելները, տիրացու, միամիտ ժողովրդի համար շատ սիրելի են, բայց նրանք հաց չեն տալիս գիւղին: Նահապետական քնից

զարթեցնելու համար սթավեցնող դեղ, կենդանի խօսք է պէտք:

ԳԱՆՈՒՄՏ.— Բայց հողին միշտ ծարաւ է... պէտք է նրան էլ մի կերակուր տուած թէ ոչ: Ուրեմն, ո՞վ սիրելի աչքի լոյս, պատասխանեցէք հարցիս, թէ չէ՞ ո՞ր ես պաղում եմ:

ԳԷՈՐԳ.— Մովսէսի շալակին կապած էր Յովսէփ Գեղեցկի ոսկորները:

ԳԱՆՈՒՄՏ.— Հա՛, հիմայ ես կարող եմ ուղիղ մտիկ տալ ձեր ճակատին և մի լաւ էլ համբուրել, որ նա էդքան գիտուն է: (Արաւ: Սենսացիա):

ԱՌԱՔԵՆԼ.— Հանահան... Ժողովուրդ, բանը սըրանով դեռ չի վերջացել... սպասեցէք: Իսկի չէք ասում, որ էստեղ խանութպան Մարգար կայ, որը իզուր չէ աչքունքը կախել, այլ երևի թէ մի բան ունի ասելու: ուրեմն թէ մի մեծ գաղտնիք: Ա՛յ ես քո գլուխը հողեմ, մէջտեղ եկ տեսնենք: Հանահան...:

ԽԱԶԱՏՈՒՐ.— Է՛դ ի՞նչ պատմութիւն է, տանուտէր Առաքել:

ԱՌԱՔԵՆԼ.— Քանահան... այ շերեփով ձուածեղ ուտող, աօ, էդ էիր ասում, որ շատ խելօք ես, որ սատանի համար փափուճ կըկարեմ: Փնճ, ժողովուրդ, քիչ էր մնացել մարդ չէի սպանել... էս, էս, էս խաչելութիւնը վկայ է... (Սաչ հանեց):

ԽԱԶԱՏՈՒՐ.— Ախր բանը ինչո՞ւն է է՛:

ՄԱՐԳԱՐ.— Թող ես խաչած գերեզմանի, օրհնած հողի ոչ արժանանամ, եթէ հէնց ինքը

վարժապետը իրա բերանով չասեց, թէ ուրեմն «հաւերը էսպէս, էնպէս»:

ԱՌԱՔԵՆԼ (աւելի բարձր ծիծաղեց):— Ա՛յ մեռնես դու ոչ, Մարգար. փան, վայ փորս...

ԳԷՈՐԳ.— Ախ, դուք դեռ չէք մոռացել հաւերի պատմութիւնը. անիրաւները մինչև անգամ մի օր գրակիս մէջ էին կեղտոտել...

ԱՌԱՔԵՆԼ.— Իսկ էդ խելքի տոպրակը մեր բակի հաւերը ուրիշ բան է կարծել. այ մա՞ծնի կարօտ սատկես դու, Մարգար, հանահան...

ԺՈՂՈՎՈՒՐԳ (հոճոաց):

ՄԱՐԳԱՐ.— Իէ ուրեմն իմ խելքս տեղումը գլուխկոնձի է տուել, ականջս էլ սկսել է ծուռումուռ լսել. էլ ես ոչինչ. հը՛ (խփեց բերնին մի՛ յետոյ վրայից միւս ձեռքով և ծածկելով շրջեց միւս կողմ):

ԳԷՈՐԳ.— Գաղտնիքը սրա մէջ է, որ ուզում էր ինձ թուղթ գրել տայ որբերի տուն քանդի, բայց ես հրաժարվեցի:

ԱՌԱՔԵՆԼ.— Ա՛... էդպէս ասա էլի՛. այ անըզգամ, մարդը ազնիւ, սիրուն, երկու տարի է իմ տան մէջ... թիւ անամօթ երեսիդ: Մի կարմրիւ վարժապետ. էդ ոչինչ:

ՄԻՆԱՍ.— Տանուտէր Առաքել, գզիր Օվանէսը փախել թոնիր է մտել. հորէն մոխրաթաւալին բերում են. դէ տղերքն էլ ածողներ են բերել... (Մոծրակը քորեց): Մի խօսքով, ամենքն էլ ասում են, դէ որ աղջիկը պատրաստ է, տղին էլ

հաւանում ես, էլ ինչո՞ւ չես սիրտդ բացում, մեզ ուրախացնում:

**Ա.Ռ.Ա.ՔԵԼ** (ոգևորված):—Հի՛... զոյգ աչքիս վերա: էս բոպէիս: Աղջի Մանիշակ, պառաւ, էստեղ եկէք: (Ոսկի և Մանիշ մտան աջից): Գէորդ վարժապետ, ես որդի չունեմ, դու եղիբ իմ որդին: Աստծուն էլ յայտնի է, որ էս ժողովրդի համար ես սիրող հայր եմ եղել. քանի որ քո սիրտն էղքան ցաւում է մեր գիւղի համար, ա՛ռ իմ թոռանս ձեռքը: Աղջի Մանիշ, մի ամաչիլ, առաջ եկ, որդի: Վարժապետ, էս գիւղի համար քեզ Աստուած ինքն է ուղարկել: Առ նրա ձեռքը: (Գէորդ բռնեց Մանիշի ձեռքը): Ապրիբ մեր մէջ, լոյս ափոխի մեզ վրա, լուսաւորիբ մեր գիւղը. օրհնում եմ ձեզ:

**ԺՈՂՈՎՈՒՐԴ**.—Աստուած շնորհաւոր անի... ամէն ու ամէն...

**ԱՇԱԿԵՐՏՆԵՐ**.—Կեցցէ՛ մեր սիրելի վարժապետը... ուռն, կեցցէ՛...

**Ա.Ռ.Ա.ՔԵԼ**.—Ոսկի, աչքդ լոյս, հրամայիբ էս բոպէիս տղերքոնց համար կարօտ բացեն:

**ՈՍԿԻ** (աջ գոնով կարգադրեց):

**Ա.Ռ.Ա.ՔԵԼ**.—Դէ փողեր փչել տուէք, շուտ: (Փողեր փչեցին. Առաքել և Ոսկի սկսեցին պարել, յետոյ ուրիշներ):

**ՕՎԱՆԷՍ** (բիշ յետոյ մոխրաթաթախ մտաւ միջի գոնով, նրբեց Նանաշ, որոնք և սկսեցին մի ծաղրական պարով ծիծաղ, ծափ, աղմուկ, ուռաներ):

7/Մ- 1922

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎԱՆ

« Ազգային գրադարան



NL0322462

16.650

ԳՐԱՆԵՆ Է 30 ԿՈՊԵՂԱ

Վաճառվում են հեղինակի

Մարվոզ ձեռագրեր պիես 3 գործ.	.	.	.	50	կ.
Մկիճի հարսանիք	"	1	"	II	տպ.
Նամբրի ճանխան	"	1	"	I	"
Նոյն	"	1	"	II	"
Խեյազար Մինաս	"	1	"	.	.
Սնկոյ երբ	"	1	"	.	.
Պոլսի երազը	"	1	"	.	.
Գիւղի վարձապետ	"	2	"	.	.

Մանուկի տակ են՝

Էփապրոպրիացիա պիես 1 գործ.  
 Նեանվածներ " 3 "

Պահեսար Թիֆլիս՝ «Գուտառներերգ» և «Կենսործնական», Բագու՝ «Սօսրուզնիկ» գրավաճառանոցներում:

Հեղինակի հասցեն՝

Нахичевань н/Д. А.

391. 99  
 Ա-13